

Որ զնոյն զաւան փակէր, կամ արտասուէր գէթ մի որ :

Այլ անմահ էին Աջ
Որք վտահ ՚ի սուրբ Խաչ
Եւ ՚ի սէր հայրենեաց
Զահեցան, պսակեաց :

1870 ԴԵԿՏԵԲԵՐ 13

Կարապետ Տ. Մինասեան :

Դ Պ Ր Ո Յ Ա Կ Ա Ն Ա Ր Դ Ի Ի Ն Ք

« Մի լինիր գատարկանձն,
Թեպետ և լի իցես մեծու-
թեամբ : »

ԹԱԼԵՍ

Արարչապետան տիեզերիս Աստուած ամենակարող ՚ի փշելն իւրում զունչ կենդանի ՚ի հողաչէն պատկեր մարդոյն, նոյնն անմահական փչմամբ պարգեւեաց նմա և զհոգի և զերջանկութիւն յաւիտենական, բայց բանական արարածն՝ Նախահայրն մարդկութեան, փառասէր ոգւովն վառեալ խաբեցաւ ՚ի սատանայէ չղանգիտեալ Արարչէն, որով և մարդկութիւնն ողջոյն կորոյս զհանգիստն Իսայց գթառատ Արարիչն գթադեալ ՚ի նա՝ ոչ կամեցաւ զկորուստ նորա իսպառ, և եգ պայմանս զի եթէ ըստ այնմ գործիցէ, գոցէ գէթ զմի մասն հանգստեան, սրտուիրելով նմա քրտամբ երեսաց իւրոց ուտել զհաց, այս է պայման հանգստեան մարդոյն, զի որպէս քրտամբ է գտանել առողջութիւն բազում հիւանդութեանց, նոյնպէս և քրտամբ է գտանել զբժշկութիւն քաղցու և բանն Պօղոսի առաքելոյն թէ՛ « Որ ոչն գործիցէ՝ և կերիցէ մի, » յանդիման առնէ մեզ

Ե

անհրաժեշտ պարտաւորութիւն մեր ունել գործունեայ կեանս՝ որով ըստանամք զկարեւորս առ հանգստութիւն կենաց, և վարեմք առողջ և սթափ կեանս : Ոչ ապաքէն բնական կազմուած մարդոյն և անդու հետաքննութիւն նորա զնոյն հաստատեն, թէ պարտ է մարդկան աշխատիլ և այնու փոքր ինչ հանգստանալ : Ահա՛ վասն այսորիկ և ոմն ՚ի փիլիսոփայից, անուն թաղէս, զորոյ զգովեստն տան բանք իւր և արարք, վճռեալ է թէ՛ « Սի լինիր գատարկանձն, թեպետ և լի իցես մեծութեամբ : »

Քանզի անակնկալ զիսպցն չիք գաղարումն և միշտ հասանին անակնկալ, վասն որոյ ոչ որ կարէ հաւատալ ոչ անձին առողջութեան, կորույց և ոչ բնչիցն և ոչ գանձուց իւրոց, զի և ոչ իսկ գիտէ զվաղուեան կենդանութեանն զստուգութիւն, կամ ոչ կարէ վտահիլ յայսմաւուր հարուստն թէ վաղիւն եւս իցէ՞ հարուստ . զի պատահի և արդէն իսկ բաղմաց պատահեալ է, զի առողջն յայսմ ժամու՝ տկարանայ ՚ի միւսումն, և ՚ի վաղիւն ՚ի հող տապանին հանգչի, և յայսմ աւուր հարուստն վաղիւն լինի թշուառ

30

և ամենայեւորին թշուառ որ, օրինակք բազումք գտանին ՚ի հաստատութիւն բանիցս, որպէս է պատահումն որ ՚ի Ռեբա կրտսանդինուպօլսոյ, որով յայտնի ճշմարտութիւն բանիցս: Սխթէ նորա որք նովին մահուամբ (հըրով կիղեալ) մեռան, համարիք եթէ պարտապանք եղեն քան զամենայն մարդիկ որ բնակեալ են ՚ի Ռեբա, ոչ երբէք, ուրեմն կարէ այսպէս պատահիլ և այլոց. ուստի ոչ ուրուք մնայ հաւատալ իւրումն գանձուց և հարստութեան, քանզի չեն կանխեալ կեանք մեր ՚ի կուտակութենէ ընչից, այլ ՚ի հանապազորդ աշխատութենէ: Ահա առաւել հաստատին բանքս՝ բանիւք Սողոմոնի իմաստնագունին քան զամենայն իմաստուննս, որ ասէ. «Սին չեւ յերբ անկեալ կաս, ո՞վ վատ, կամ երբ ՚ի քնոյ դարթիցեալ փոքր մի նընջիցես, փոքր մի նստիցիս, փոքր մի նիրհեցիս, փոքր մի հանգուցանիցես ըզձեռն քո ՚ի վերայ լանջաց քոց: Ապա այնուհետեւ հասանիցի քեզ իբրեւ զչար ճանապարհորդ՝ աղքատութիւն և կարօտութիւն իբրեւ զժիր սուրհանդակ:» Առաջ. Զ. 9:

Արդ՝ որպէս տեսաք զգիւպացն յարափոփոխութեալումն, վասն որոյ եթէ իցեն բանական՝ որք վտահանայցեն գանձուցն եւ հարստութեանց իւրեանց, յիշեցեն զի գանձք և ամենայն ինչ դիւրաւ դառնան ՚ի նանրութիւն: Աւրեմն նորա որք հաւատացեալ գանձուց իւրեանց և կապեալ են շղթայիւքն ծուլութեան, եթէ պատահիցին միում ՚ի գիւպացս՝ զինչ արասցեն, եթէ ոչ ապշեալ մընասցեն ՚ի տագնապ տարակուսի՝ ասեցով. «Տէր իմ եհան զտնտեսութիւնս, գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ.» այն ոչ կարէ գործել քանզի «Ռազմաժամանակեայ սովը

րութիւնն զընութեանն առնու զօրութիւնն.» վարժեալ է ծուլութեան, ծուլութիւնն մեղկացուցեալ է զկորով անդամոցն և չիք կար աշխատութեան, չըգիտէ զհանգամանս աշխատութեան, քանզի և չէ իսկ ուսեալ կուտակեալ ինչք եւ ճիսութիւնք պատրեն զմարդ, խոստանան լինել իւր սեպհական. վասն որոյ խաբի թշուառն և մատնէ զանձն գորգանաց և հեշտութեանց, ՚ի փափկութիւնս յօրանայ և կորուսանէ զվայելական տրամադրութիւն իւր ՚ի զանազան գործառնութիւնս, եւ ահա այսու աղագաւ անկանի և լինի թշուառ որ, զի չունի զգանձն անառիկ՝ զբարեկամն ազգի մարդկան՝ զաշխատութիւնն որ սատար լինի նմա ցմահ:


Ահա վասն այսպիսի գիւպացս պատահման բարեացականն մարդկային բնութեան՝ փիլիսոփայն թաղէս վըճուէ, զի մի գուցէ կարծիցեն մարդիկ թէ կարեն հանգիստ լինիլ ցմահ գանձուքն և դադարիցին յաշխատութենէ, եւ ապա պատահեալ գիւպացս՝ անկցին ՚ի թշուառութիւն:

Աւրեմն կայ մնայ իւրաքանչիւրոցն, ոչ միայն ՚ի բանիցս ուսանիլ, այլ եւ իւրովի զօգուան իւր ծանուցեալ իբրք առարկայ յիշողութեան համարեալ խորհիլ և ըստ արժանոյն գործել: Իսկ ձեզ, ծնողք և կրթիչք մանկանց, կայ մնայ աշխատութեամբ ձերով լինել օրինակ մանկանց և կրթել զնոսա յաշխատութիւն, զի մի ընդունիցիք զբանս յանդիմականս թէ՛ «Օնողք արժանի են նախատանաց և պատժոց, որ զորդիս իւրեանց թուղուն չըջել անգործ.» Սի անցանիլիք ըստ պարտս ձեր, սպա թէ ոչ՝ ոչ կարէք գտանել զհանգիստն, և ոչ ՚ի հող տապանի ձերում ՚ի ձայնէ որդւոցդ՝ որք ՚ի բողբ ելցեն վասն ձեր, զի

պատճառ եղեալ էք թշուառութեան նոցա : Իսկ դուք իշխանք փառամոլք , մի թուեսցի ձեզ զի գանձուք ձերովք ժառանգիցէք զհանգիստն . գիտաս ջիք զի առ ժամանակեայ է այդ հանգիստ , սուտ և վայրկենական . զմտաւածէք զբանս Աւետարանին թէ՛ « Աս ըն ուրումն մեծատան ետուն անդք տոհմականս և ասէ . աստցից ցանձն իմ , անձն , ունիս բազում բարութիս համբարեալ ամաց բազմաց . հանգիք , կեր , արք և ուրախ լէր : Ասէ ցնա Աստուած , անմիտ , յայտում գիշերի զտգիտ ՚ի քէն ՚ի բաց պահանջիցեն , և զոր պատրաստեցերդ ում լինիցի . զի ոչ եթէ ՚ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա : »

Վասն որոյ պարտ է ամենեցունցս գանձել գանձս անկողոպտելիս , որ լինի աշխատութեամբ , հանապազորդելով ՚ի գործ և գոհանալով զՏեառնէ վասն շնորհացն , և չէ պարտ բընաւ լինիլ դատարկանձն , թէպէտ և լի իցեմք մեծութեամբք :

1870 Դեկտեմբ. 17
 Երբ-ստաղէ՛մ ,
 Վարդ-Բաշ-Բեբո-նի
 Գ . Տ . Յար-Լի-նե-նի
 Իսմայելի .
 Աշ . Ժառ . Ուսում :



1870 Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ը

Սոյն թուականն ալ սահեցաւ , գնաց , միացաւ այն գրեթէ մոռցուած թուականներուն հետ , որոյ մէջ ապրեցան և գործեցին մեր նախնիք :

Ինկաւ , գլորեցաւ , անյայտ եղաւ այն անթափանցելի վարագուրին ներքեւ , զոր անհունութիւն կամ յաւիտենականութի կ'անուանեն մարդիկ :

Այս գլորումը՝ համայն մահկառնացուաց ականջին տխուր ժխոր մը , ցաւալի և միանգամայն սոսկալի պայթիւն մը գործելով անոր թմբուկները թնդացուց , որուն հնչունը հազարաւոր տարիներէ վերջ անգամ զգալի պիտի ըլլայ և յիշատակը սերունդ է ՚ի սերունդ կենդանի պիտի մնայ մտքերու մէջ :

Իայց այս ժխորը՝ ամենուն ալ մի և նոյն ազդեցութիւնը ունեցաւ : Ամենուն ալ թշուառութիւն գուժեց՝ թէ մասնաւորաց :

Ուրիշները ինչ կ'ուզեն թող ըսեն , իսկ ես կ'ըսեմ որ 1870 թուականը երբ իր վերջին հրաժարականը կուտար անդառնալի ճանապարհորդութիւնը բնելու համար , անոր ճակտին վրայ սեւ կնիք մը դրօշմուած կը տեսնուէր :

Ինչ էր այս կնիքը , և ո՞վ զայն դրօշմողը : — Այս չորս հարցմանց պատասխանելու համար քիչ մը ընդարձակ մտածելու ենք :


Քրիստոնեայ , մահմետական , հըրեայ և այլն շատ մը ազգեր՝ բարի , յառաջադիմասէր եւ լուսոյ սիրող ճշմարիտ Աստուծոյ մը գոյութիւնը կը հաստատեն , որ ստեղծած է անհուն տիեզերքս , որուն հետ նաեւ մարդկային ցեղը , տալով անոր անմահ հոգի , լոյս , կարողութիւն և կամք : Անմահ հոգին՝ զոր մարմնոյ վարագուրին տակ կը կրենք , ապացոյց է որ մարդս հանդերձեալ է վայելել աշխարհ մը , որ բարի և յաւիտենական Աստուծոյն պարգեւն է , և զոր բարի և յաւիտենական յիշատակաց արժանի գործոց փոխարէն՝ բոլոր իրեն հաւատացող և ճանչցող հոգիներու կը վերապահէ : :

Իայց որովհետեւ մարդս անմահ հոգի ունենալով հանդերձ , եթէ ա

պատճառ եղեալ էք թշուառութեան նոցա : Իսկ դուք իշխանք փառամոլք , մի թուեսցի ձեզ զի գանձուք ձերովք ժառանգիցէք զհանգիստն . գիտաս ջիք զի առ ժամանակեայ է այդ հանգիստ , սուտ և վայրկենական . զմտաւածէք զբանս Աւետարանին թէ՛ « Աս ըն ուրումն մեծատան ետուն անդք տոհմականս և ասէ . աստցից ցանձն իմ , անձն , ունիս բազում բարութիս համբարեալ ամաց բազմաց . հանգիք , կեր , արք և ուրախ լէր : Ասէ ցնա Աստուած , անմիտ , յայտում գիշերի զտգիտ ՚ի քէն ՚ի բաց պահանջիցեն , և զոր պատրաստեցերդ ում լինիցի . զի ոչ եթէ ՚ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա : »

Վասն որոյ պարտ է ամենեցունցս գանձել գանձս անկողոպտելիս , որ լինի աշխատութեամբ , հանապազորդելով ՚ի գործ և գոհանալով զՏեառնէ վասն շնորհացն , և չէ պարտ բընաւ լինիլ դատարկանձն , թէպէտ և լի իցեմք մեծութեամբք :

1870 Դեկտեմբ. 17
 Երբնստեմբ. Գ. Տ. Յարմարիւնի
 Իսմայելի .
 Աշ. Ժառ . Ուսում :



1870 Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ը

Սոյն թուականն ալ սահեցաւ , գնաց , միացաւ այն գրեթէ մոռցուած թուականներուն հետ , որոյ մէջ ապրեցան և գործեցին մեր նախնիք :

Ինկաւ , գլորեցաւ , անյայտ եղաւ այն անթափանցելի վարագուրին ներքեւ , զոր անհունութիւն կամ յաւիտենականութիւն կ'անուանեն մարդիկ :

Այս գլորումը՝ համայն մահկառնացուաց ականջին տխուր ժխոր մը , ցաւալի և միանգամայն սոսկալի պայթիւն մը գործելով անոր թմբուկները թնդացուց , որուն հնչունը հազարաւոր տարիներէ վերջ անգամ զգալի պիտի ըլլայ և յիշատակը սերունդ է ՚ի սերունդ կենդանի պիտի մնայ մտքերու մէջ :

Իայց այս ժխորը՝ ամենուն ալ մի և նոյն ազդեցութիւնը ունեցաւ : Ամենուն ալ թշուառութիւն գուժեց՝ թէ մասնաւորաց :

Ուրիշները ինչ կ'ուզեն թող ըսեն , իսկ ես կ'ըսեմ որ 1870 թուականը երբ իր վերջին հրաժարականը կուտար անդառնալի ճանապարհորդութիւնը բնելու համար , անոր ճակտին վրայ սեւ կնիք մը դրոշմուած կը տեսնուէր :

Ինչ էր այս կնիքը , և ո՞վ զայն դրոշմողը : — Այս չորս հարցմանց պատասխանելու համար քիչ մը ընդարձակ մտածելու ենք :

Քրիստոնեայ , մահմետական , հըրեայ և այլն շատ մը ազգեր՝ բարի , յառաջադիմասէր եւ լուսոյ սիրող ճշմարիտ Աստուծոյ մը գոյութիւնը կը հաստատեն , որ ստեղծած է անհուն տիեզերքս , որուն հետ նաեւ մարդկային ցեղը , տալով անոր անմահ հոգի , լոյս , կարողութիւն և կամք : Անմահ հոգին՝ զոր մարմնոյ վարագուրին տակ կը կրենք , ապացոյց է որ մարդս հանդերձեալ է վայելել աշխարհ մը , որ բարի և յաւիտենական Աստուծոյն պարգեւն է , և զոր բարի և յաւիտենական յիշատակաց արժանի գործոց փոխարէն՝ բոլոր իրեն հաւատացող և ճանչցող հոգիներու կը վերապահէ : :

Իայց որովհետեւ մարդս անմահ հոգի ունենալով հանդերձ , եթէ ա